ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2195-Ա « 02 » հունիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 585-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետի 2019 թվականի մարտի 6-ի «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 585-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «Ադամյան Սամվել» բառերը փոխարինել «Նորսոյան Նաիրա» բառերով.

2) «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ, մանկավարժ» բառերը փոխարինել «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ, մանկավարժ» բառերով.

3) «ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնությունների կանխարգելման բաժանմունքի դպրոցական ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ Ոստիկանության գլխավոր վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնի հատուկ կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր» բառերով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ